

19 փետրվարի 2021թ.

ք. Երևան

250

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ
 ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
ՈՐՈՇՈՒՄ թիվ 007746/16
 ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ԳՈՐԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ես՝ ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության պետ Ա. Մնացականյանս, քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ 7746 գործը և կից նյութերը,

ՊԱՐԶԵՑԻ

Ա/Ձ Ֆելիքս Ղարիբյանը /ՀՎՀՀ՝ 66935068, հասցե՝ Լոռու մարզ, Օձուն, 10 փ. 44, անձնագիր՝ AP0625862, ՀԾՀ՝ 2001450087/ «ՀՀ և ԵՏՄ անդամ պետությունների միջև անուղղակի հարկերի հաշվարկման և վճարման առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետում չի ներկայացրել 05.11.2020թ-ին կատարված ներմուծման վերաբերյալ ներմուծման հարկային հայտարարագիրը և հայտարարությունը, որի համար նախատեսվում է պատասխանատվություն Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169¹ հոդվածի 2-րդ մասով:

Պատշաճ ծանուցված լինելով արձանագրության կազմման, գործի քննության վայրի և ժամանակի մասին կողմը հայտնել է, որ իր կողմից ներմուծում չի իրականացվել:

Գործի քննության ընթացքում կատարված ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ Ֆելիքս Ղարիբյանը 05.11.2020թ-ին կատարված ներմուծման մասով ներմուծման հարկային հայտարարագիր ներկայացնելու պարտավորություն չի կրում:

Հաշվի առնելով վարչական իրավախախտման դեպքի բացակայությունը, ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 244², 247 հոդվածի 1-ին մասով, 281 հոդվածներով և 282 հոդվածի 2-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

Կարճել Ֆելիքս Ղարիբյանի վերաբերյալ հարուցված թիվ _____ գործի վարույթը:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

(Handwritten signature)



Ա. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ